երախայական կը համարէր, յանկարծ սիրտը փլաւ, մտաբերեց կարելի է—ինչ վիճակի մէջ է աղջիկն, ինչ սև սուգ կապած են նորա ծնողքը, իրենց տան աւերը, գերութիւնը, թէ Օսկիատի կորուստը կողբանկերևի յիշեց թէ նորա ծնողքը ինչ անչափելի ցաւի մէջ են որպէս «չոքերուն կը տիեն, փողպատը (օձիք) կը ձևեն, ծամերը կը փրցուն»։

—«Քուրս, ասաց Թորկ»։

—Իմալ Ատուած հախ ա, չը Թորկիմ, ընծի իդա տեղ սպանայ։

—Քուրս, Թորկ, ասաց, կզաւ աղջկան դլխից համբուրեց, դարձեալ արտասուեց։

Օսկիատ զդաց որ Յովասափ կը հեկեկայր, ուրախ ժպիտով նորա դառնալով։

—Հա, բան չը կայ, Յովասափ, ինչ էղաւ։

Յովասափ հեռացաւ առանց ձայն հանելու։

Օսկիատ զդաց թէ բանը ինչ վիճակի մէջ է, քրոջը յայտնեց եղածն, ոլք պատրաստեցան փախչելու։

Յովասափ մի ժամու չափ հեռացած էր, Զամշակի տափարակի արևմտեան հիւսիսային ծայրն ժայռերէն դէպի վայր նայեցաւ, երևան խաչակնքեց, Սուրբ Վարդիկ[1] հայրից օգնութիւն խնդրեց, դարձաւ։

Սրտապնդած երեկոյեան կը սպասէր։

Երեկոյն հասաւ, Յովասափ դժուարին դրութեան մէջ էր, վասն զի գիշերապահի պաշտօնն, այս երեկոյին իւր ընկերներէն երեքը պիտի կատարէին։

Մէջոց մի դտաւ Յովասափ, Օսկիատից օդի խընդրեց, կէս գիշեր անցած էր, արբեցուց գիշերապահ-

---

Ս. Վարդէնօր վանքը այս վերան ի հիւսիս արևմտեան կողին վերայ է մի ժամ խոնարհ։